Արձանագրություն N 2

ՀԾԿՀ-19/2-ԷԱՃԱՊՁԲ ծածկագրով էլեկտրոնային ձևով էլեկտրոնային աճուրդի միջոցով գրենական պիտույքներ և գրասենյակային նյութերի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Սարյան 22

30 նոյեմբերի 2018թ.
ժամը 17:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լիլիթ Մկրտչյանը, անդամներ՝ Ջուլիետա Բաբայանը, Արսեն Թերզիկյանը և քարտուղար՝ Սիլվա Հարությունյանը:

Օրակարգ

ՀԾԿՀ-19/2-ԷԱՃԱՊՁԲ ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում փոփոխություններ կատարելու մասին

ՀԾԿՀ-19/2-ԷԱՃԱՊՁԲ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Լիլիթ Մկրտչյանը նիստը հայտարարեց բացված և ներկայացրեց տվյալ աճուրդի համար 30.11.2018թ. ֆինանսների նախարարության կողմից ստացված բացասական եզրակացության բովանդակությունը, այն է.

«Հրավերում ներառված պայմանագրի նախագծին կից տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում սահմանված են ապրանքների մատակարարման կոնկրետ ժամկետներ, մինչդեռ ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, համաձայն որի՝ ապրանքների մատակարարումը և դրանց դիմաց վճարումը կարող են կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում»:

Հանձնաժողովը ուսումնասիրեց և որոշեց կատարել փոփոխություն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն:

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2018թ. դեկտեմբերի 13-ին ժամը 10:30-ին, ՀՀ ք. Երևան, Սարյան 22 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ _____ Լիլիթ Մկրտչյան

անդամներ _____ Ջուլիետա Բաբայան

_____ Արսեն Թերզիկյան

քարտուղար _____ Սիլվա Հարությունյան